ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների իրականացման նպատակով կազմակերպված ԲԸՀԱՇՁԲ-14/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների իրականացման նպատակով կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 5.1.1 և 8.4 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
01.12.2014թ. կնքված N ԲՀՀԱՇՁԲ-14/13 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 14 փետրվարի 2018 թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և Կապալառուի միջև 01.12.2014թ. ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների իրականացման համար կնքված N ԲՐՀԱՇՁԲ-14/13 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի N1 հավելվածով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքներից չկատարված (մնացորդային) և 2018թ. ընթացքում Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների գինը սահմանել **197 047 600 (մեկ հարյուր իննսունյոթ միլիոն քառասունյոթ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Համաձայնագրի գումարից մինչև **6 000 000 (վեց միլիոն)** ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկանյին երաշխիք ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

1.3 Հաստատել աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.4 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու՝	Կ ա պ ա լ ա ռ ու՝
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011971 ՀՎՀՀ 02565827	<<Բաղրամյանշին>> ԲԲԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ ՝<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 115004673956 ՀՎՀՀ 04600132
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Գ. Վարդանյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
01.12.2014թ. կնքված
աշխատանքների կատարման N ԲՀՀԱՇՁԲ-14/13
պետական գնման պայմանագրի
14 փետրվարի 2018թ. կնքված N3 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

2018թ. հատկացված գումարների շրջանակում ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների կատարման

N ը/կ	Աշխատանքների կատարման ժամկետը		Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)
	Սկիզբը	Ավարտը (ներառյալ)	
1	26.02.2018թ.	20.03.2018թ.	6 310 900
2	21.03.2018թ.	20.06.2018թ.	23 582 700
3	21.06.2018թ.	20.09.2018թ	71 838 300
4	21.09.2018թ.	31.10.2018թ.	95 315 700
Ընդամենը՝			**197 047 600**

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

<<<< կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011971
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա պ ա լ ա ռ ու՝

<<Բաղրամյանշին>> ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ
<<Հայրիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 115004673956
ՀՎՀՀ 04600132

Տնօրեն՝

_____ Գ. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
01.12.2014թ. կնքված
աշխատանքների կատարման N ԲՀՀԱՇՁԲ-14/13
պետական գնման պայմանագրի
14 փետրվարի 2018թ. կնքված N3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքներ	-	-	6 310 900	29 893 600	29 893 600	29 893 600	101 731 900	101 731 900	101 731 900	197 047 600	197 047 600	197 047 600	197 047 600

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011971
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ու՝

<<Բաղրամյանշին>> ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 115004673956
ՀՎՀՀ 04600132

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Գ. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 848-02
«07» 02 2018

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի** (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և **<<ԲԱՂՐԱՄՅԱՆՇԻՆ>> ԲԲԸ-ի** (իրավաբանական հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Լեռնագոգ, ՀՎՀՀ՝ 04600132)(այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված **''ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման'' աշխատանքների N ''ԲԸՀԱՇՁԲ-14/13'' պետական գնման պայմանագրից** (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել **6,000,000 (վեց միլիոն) ՀՀ** դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 115004673956 հ/հ-ին փոխանցելու պահից և գործում է մինչև 31.12.2018թ. ներառյալ:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի ձևի կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ.փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл.почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am